ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2020 թվականի N 41-Ա

<<ԶԱՆԳԵԶՈՒՐ ԳԱԶ>> ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2020թվականի հունիսի 21-ի N 01//03673-2020 գրությունը և <<Զանգեզուր գազ>> ՍՊԸ-ի տնօրեն Մարտունիկ Պողոսյանի 2020 թվականի հունիսի 22-ի դիմումը, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքի Տեղ գյուղի Արցախի խճուղի թիվ 4/1-4/2 հասցեում գտնվող <<Զանգեզուր գազ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0,2057հա բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասում (ծածկագիր 09-101-0057-0007, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27032015-09-0009) 425,9 ք.մ. արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված շինությունները (83,9 ք.մ. արտաքին մակերեսով ճնշակայան, 156,6 ք.մ. արտաքին մակերեսով ծածկոց /լցակայան/, 103,1 ք.մ. արտաքին մակերեսով սպասասրահ, 44,4 ք.մ. արտաքին մակերեսով էլ. ենթակայան, 37,9 ք.մ. արտաքին մակերեսով ղեկավարման կետ) որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական և համարել <<Զանգեզուր գազ>> ՍՊԸ-ի սեփականությունը:

2. Տեղեկացնել <<Զանգեզուր գազ>> ՍՊԸ-ի տնօրենին, սույն որոշման ընունման օրվանից 60-օրյա ժամկետում Տեղ համայնքի բյուջեի N 900285001674 հաշվեհամարին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշման կարգի 2-րդ գլխի 18-րդ կետի բ) ենթակետով հաշվարկված վճարը՝
   1) 587742 (հինգ հարյուր ութանասուն յոթ հազար յոթ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ (425,9 ք.մ.x 20000 դրամ x 0.069 = 587742) շինությունների համար
   2) Իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը
   3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տեղ համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունիսի 23
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2020 թվականի N 42-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Գուրգեն Ասատրյանի 24.06.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խնածախ գյուղում գտնվող 09-044-026-002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Խնածախ 2-րդ փողոց թիվ 24 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունիսի 24
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2020 թվականի N 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 45-Ն որոշման 8-րդ կետի, ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Նվազեցնել՝ մշակութային միջոցառումների կազմակերպում բաժնի 5113 (կապիտալ վերանորոգում) տնտեսագիտական հոդվածը՝ 257,0 հազ. դրամով,
2. Նախատեսել՝ մշակութային միջոցառումների կազմակերպում բաժնի 5122 (վարչական սարքավորումներ) տնտեսագիտական հոդվածով՝ 257,0 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունիսի 26
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և 3-րդ մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 19-ի թիվ 13-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Աճուրդ-վաճառքի ձևով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը.
   1) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Տեղ գյուղ,24-րդ փողոց, թիվ 10/1>> հասցեի /նպատակային նշանակությունը՝<<բնակավայրերի>>, գործառնական նշանակությունը՝ <<բնակելի կառուցապատման>>/, 497,8ք.մ. հողամասը (վկայական 12052020-09-0029, ծածկագիր՝ 09-101-0043-0008)՝ 210000 (երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ օժանդակ շինություն կառուցելու նպատակով,
   2) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Տեղ գյուղ, Արցախյան խճուղի թիվ 2/2>> հասցեի /նպատակային նշանակությունը՝ <<արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>>, գործառնական նշանակությունը՝ <<արդյունաբերական օբյեկտների>>/, 700,0ք.մ. հողամասը (վկայական 12052020-09-0030, ծածկագիր՝ 09-101-0124-0052)՝ 280000 (երկու հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ արտադրական գործունեության օբյեկտ կառուցելու նպատակով:
   3) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի <<Կորնիձոր գյուղ, Գոմատեղերի թաղամաս թիվ 3/4>> հասցեի /նպատակային նշանակությունը՝ <<արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության>>, գործառնական նշանակությունը՝ <<գյուղատնտեսական արտադրական օբյեկտների>>/, 512,0 ք.մ. հողամասը (վկայական 12052020-09-0028, ծածկագիր՝ 09-052-0113-0058)՝ 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով:
2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունիսի 30
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020 թվականի N 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 21-ի թիվ 22-Ա և 2020 թվականի հունիսի 19-ի թիվ 14-Ա որոշումները, ***որոշում եմ.***

1. Աճուրդ-վաճառքի ձևով օտարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ անշարժ գույքերը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող, Կորնիձոր գյուղի Գոմատեղերի անվանյալ տարածքի թիվ 3/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագրիր 09-052-0113-0055/ 0,1425հա /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/ հողամասը և նրա վրա ամրակայված 700,3քմ մակերեսով շինությունը/անասնաշենք/ օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 1070000/մեկ միլիոն յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, որից՝ հողատարածքի համար՝ 880000 դրամ, շինության համար՝ 190000 դրամ:
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող, Քարաշեն գյուղի 11-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 09-111-0115-0021/ 0,1989հա /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/ հողամասը և նրա վրա ամրակայված 204,3 քմ անասնաշենքը օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 924000/ինը հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ, որից՝ հողատարածքի համար՝ 617000 դրամ, անասնաշենքի համար՝ 307000 դրամ:
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող, Տեղ գյուղի Արցախի խճուղի թիվ 29 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր 09-101-0001-0001/ 0,75567հա /նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/ հողամասը և նրա վրա ամրակայված 693,3 քմ շենք-շինությունները /պահեստ՝ 138,3 քմ, պահեստ՝ 207,0 քմ, անասնաշենք՝ 293,9 քմ, անասնաշենք՝ 43,4 քմ, սանհանգույց՝ 10,7 քմ/ օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 5370000/հինգ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ, որից՝ հողատարածքի համար՝ 4155000 դրամ, շենք-շինությունների համար՝ 1215000 դրամ:
2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունիսի 30
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2020 թվականի N 46-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԸ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով <<ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի N 1 մանկապարտեզի վերակառուցում>> ծրագրի ԻԿ-ի նախագահի 2020 թվականի հուլիսի 2-ի դիմումը, ***որոշում եմ.***

1. Ձևակերպել <<ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի N 1 մանկապարտեզի վերակառուցում>> ծրագրի ԻԿ-ի կողմից իրականացված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղի 18-րդ փողոց թիվ 13 հասցեի <<ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի N 1 մանկապարտեզի վերակառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը):
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հուլիսի 3
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հուլիսի 2020 թվականի N 47-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Գարուն Գյոզալյանի 03.07.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում գտնվող 09-101-0021-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ 33-րդ փողոց թիվ 1 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հուլիսի 3
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2020 թվականի N 48-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 33,86 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՍԵՅՐԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը ու նկատի ունենալով Սեյրան Մաթևոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Տեղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 29,86հա 4-րդ կարգի (տարեկան 1 հա-ի համար՝ 1250 ՀՀ դրամ) և 4,0հա 3-րդ կարգի (տարեկան 1հա-ի համար՝ 2070 ՀՀ դրամ) արոտավայրերը՝ համաձայն հավելվածի, տարեկան ընդհանուր 45600 (քառասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով, 3 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրել քաղաքացի Սեյրան Հենրիկի Մաթևոսյանին (անձնագիր AR0286735, տրված՝ 10.05.2017թ., 032-ի կողմից)՝ անասնապահության նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հուլիսի 17
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2020 թվականի N 49-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 53,76 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՍԵՅՐԳԵՅ ՍՆԵՑՈՒՆՑԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը ու նկատի ունենալով Սերգեյ Սնեցունցի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Տեղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 53,76հա 4-րդ կարգի (տարեկան 1 հա-ի համար՝ 1250 ՀՀ դրամ) արոտավայրը՝ համաձայն հավելվածի, տարեկան 67200 (վաթսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով, 3 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրել քաղաքացի Սերգեյ Սերոբի Սնեցունցին (ն.ք. 001766161, տրված՝ 14.03.2014թ., 032-ի կողմից)՝ անասնապահության նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հուլիսի 17
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հուլիսի 2020 թվականի N 50-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽՆԱԾԱԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 50,0 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԱԼԻՆԱ ՋԱՀԱՆԳԻՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը ու նկատի ունենալով Ալինա Ջահանգիրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող Խնածախ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 50,0հա 5-րդ կարգի (տարեկան 1 հա-ի համար՝ 1250 ՀՀ դրամ) արոտավայրը՝ համաձայն հավելվածի, տարեկան 62500 (վաթսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով, 3 տարի ժամկետով, վարձակալությամբ տրամադրել քաղաքացի Ալինա Էդուարդի Ջահանգիրյանին (ն.ք. 0028544594, տրված՝ 22.04.2015թ., 032-ի կողմից)՝ անասնապահության նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հուլիսի 17
գ. Տեղ